



ԳՕՇ ԳԻՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻՆ ԲԱՅՈՒՄԸ

Posted on October 9, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Ասպետ եւ Այտա Փողարեաններու սիրանքը

Գեորգ Նաթալի (Եազըճեան), Գօշ գիւղ, 1 Հոկտեմբեր 2022

Շաբաթ, 1 հոկտեմբեր 2022-ին, 15 հոգիով Երեւանէն *միջրոպասով* ուղղուեցանք Տաւուշի մարզի Գօշ գիւղ՝ ներկայ ըլլալու գիւղի «Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան» համայնքային կեդրոնի բացման արարողութեան: Շուրջ 100 հոգի հաւաքուած էր կեդրոնի դռան առջեւ, հաւանաբար կետը՝ Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1960-1980-ական թուականներու շրջանաւարտներ: Անոնց, աշխարհասփիւռ ուրիշ մելգոնեանցիներու, նաեւ սփիւռքահայ անհատ բարեգործներու նուիրած գումարներով հիմնովին նորոգուած մեծ տունը այսուհետ պիտի ծառայէ գիւղի բնակիչներու, մասնաւորաբար նոր սերունդի գեղագիտական, մարդկային եւ ազգային դաստիարակութեան:

Յուզիչ էր տեսնել գրկախառնուող զիրար տասնամեակներով չտեսած նախկին համադասարանցիներու: Ալ ո՞ր, եթէ ոչ հայրենի հողի վրայ պետք է աշխարհով մէկ սփռուած հայը հանդիպի իր սիրելիին:



Կեդրոնի բացմանը ներկայ էր Դիլիջանի քաղաքապետ Դաւիթ Սարգսեանը:

Համայնքային կեդրոնի նորոգման գաղափարը կը պատկանի Ասպետ եւ Այտա

Փողարեան մելգոնեանցի ամուլին: Նախկին եթովպահայ ու իրանահայ, այնուհետ ԱՄՆ հաստատուած գոյգը, որոշում կայացուցած է հաստատուիլ Գօշ գիւղը եւ սեփական օրինակով նպաստել Հայրենիքի բարգաւաճման: Բարեբախտութիւն է, որ անոնց ծրագիրները կը վայելեն աջակցութիւնը գիւղապետ Գեորգ Ամիրխանեանի: Փողարեաններու կողքին, վերջինս գործնապէս ալ, իր աշխատանքային ժամերէն ետք մասնակցած է նորոգման աշխատանքներուն՝ շաղախի պատրաստում, պատերու ծեփում, էլեկտրական, ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցերու անցկացում եւ այլն:

Ժամը 14-ն է: Գիւղացի աղջնակ մը եւ տղեկ մը իրենց հնչեցուցած բանաստեղծութեամբ կը յայտարարեն արարողութեան սկիզբը: Փողարեաններն ու գիւղապետը ապա վար կ'առնեն մուտքի դռան աջին տեղադրուած, «**Գօշի Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան համայնքի կենտրոն**» գրութեամբ քարէ ցուցանակը ծածկող սաւանը՝ ներկաներու ծափողջոյններուն տակ: Բոլորը ներս կը մտնեն: Ընդարձակ, ճիւղաթոյր մաքրութեամբ մեծ սրահին սեղանները կը յորդին գիւղացիներու պատրաստած ուտելիքներով: Գօշավանքի հոգեւոր հովիւ Տէր Թադէոս քահանայ Թադէոսեանը, նախքան տան կարգը կատարելը, կու տայ շատ իմաստալից քարոզ մը՝ առակի տեսքով.



– Ծերացած

թագաւորը, մտահոգ իր երկրի գալիքով, կը փափաքի գիտնալ, թէ իր երեք որդիներէն ո՞ր մէկը կրնայ աւելի բարգաւաճ ապագայ ապահովել երկրին՝ իր մահէն ետք, ու անոնցմէ իւրաքանչիւրին կ'առաջարկէ պալատին պարապ ամբարներէն մէկը լեցնել, իրենց կարծիքով, ամենէն օգտակար նիւթով: Երեք որդին ամբարը կը լեցնէ ցորենով՝ շեշտելով հացին եւ առհասարակ սնունդին կենսական անհրաժեշտութիւնը: Միջնեկ

որդին կ'ամբարձրէ փայտ՝ նկատի ունենալով փայտանիւթին կարելորդութիւնը իբրեւ շինարարութեան եւ ջեռուցման համար անհրաժեշտ նիւթ: Կրտսեր որդին ամբարը կը պահէ ... դատարկ: Երբ կու գայ ստուգման պահը եւ բոլորով կը մտնեն ամբար՝ հոն բան չեն տեսներ. ծանրածանր խաւար է: Թագաւորը կ'ուզէ յանդիմանել «ծոյլ» որդին: Այդ պահին վերջինս կը վառէ մոմ մը եւ ամբարը տեսանելի կը դառնայ: Որդին կ'ըսէ. – Ես լոյսով, գիտութեամբ, կրթութեամբ, մշակոյթով ու արուեստով պիտի ողողեմ մեր երկիրը: Եթէ ունենանք անոնցմով յագեցած սերունդ, մեր երկիրը կը յորդի ցորենով ալ, փայտով ալ, ամէն տեսակ նիւթական բարիքներով ալ: Պարզ է, որ թագաւոր հայրը իրեն յաջորդ կը կարգէ կրտսեր որդին:

Իր քարոզէն ետք, Տէր Թադէոս կատարեց համայնքային կեդրոնի տան կարգը: Ներկաները մասնակցեցան աղօթքին: Այնուհետեւ խօսք առին գիւղապետ Գեորգ Ամիրխանեանը եւ Ասպետ ու Այտա Փողարեանները: Յստակ էր ելոյթ ունեցողներուն համեստութիւնը. անոնք չէին յաւակներ թէ մեծ գործ կատարած են, այլ ընդամենը կատարած են իբրեւ հայ ազգի մասնիկ իրենց պարտականութիւնը Հայրենիքի նկատմամբ:

Գիւղի փոքրիկներէն բաղկացած պարախումբի ելոյթէն ետք ներկաները մօտեցան սեղաններուն եւ վայելեցին գօշեցիներուն պատրաստած հիւրասիրութիւնը՝ շնորհաւորանքներ եւ բարեմաղթանքներ յղելով կեդրոնի նորոգութեան բոլոր մասնակիցներուն, մասնաւորաբար Ասպետին ու Այտային՝ բարձր գնահատելով անոնց նուիրուածութիւնը:

Յուզիչ էր այն պահը, երբ ներկայ մելգոնեանցիները յանպատրաստից «երգչախումբ» մը կազմելով երգեցին իրենց Մայր վարժարանին քայլերգը: Շատեր արդէն թռչներու տէր, կը հնչեցնէին այն երգը, որ 30-60 տարի առաջ խանդավառութեամբ կ'երգէին Մելգոնեան Կրթական Հաստատութեան բակին մէջ, մինչդէռ իրենց թռչները 17 տարիէ ի վեր զրկուած են այդ երանութենէն՝ AGBU-ի (չջփոթել Լուիզ Սիմոնի նախագահութեան օրերուն մահացած Հ. Բ. Մ.ի հետ) Նիւ Եորքի ապիկար եւ տիւմար ղեկավարիկներու դաւերուն պատճառով:

Արեւամուտին ուխտաւորներու մեր խումբը, հոգեկան վեհացման պահեր ապրելէ ետք, վերցուց Երեւան վերադարձի ուղղութիւնը:

Կ'արժէ նշել, որ Գօշ երթուղարձի փոխադրակառքը սիրայօժար տրամադրած էր «Գեղարդ» կայքի անձնակազմէն, Հայրենիքի մէջ հաստատուած գործարար Ռազմիկ Մարտիկեանը:



Ասպետ եւ Այտա

Փողարեաններու օրինակը պետք է վարակիչ դառնայ աշխարհի չորս ծագերուն այսօր միլիոններով ապրող հայութեան համար. ԴՄՐՁ ԴԵՊԻ ԵՐԿԻՐ: Սա՛ է ազգովին փրկուելու մեր միակ, երաշխաւորուած միջոցը: Հայրենիքէն հայկական գերիշխանութեան տակ մնացած այս փոքրիկ հողակտորը կարիքն ունի արարող ձեռքերու եւ միտքերու եւ ոչ թէ աշխարհի ոստաններուն մէջ ցոյցերով, խնդրագիրներով եւ այլններով զայն «պաշտպանելու» պատրանքով մոլորեալներու: Հայրենիքը արարելո՛ւ, ստեղծագործելո՛ւ, սերնդագործելո՛ւ, քարը քարին վրայ դնելու սրբազան վայր է եւ ոչ թէ ծերանոց կամ գերեզմանոց, ուր ուզեն հանգրուանիլ տասնամեակներով օտարներուն համար բարիքներ ստեղծած մեր ազգակիցները: Հարիւր հազարներով, միլիոններով պետք է լեցնել երկիրը: Այդ պարագային, բարգաւաճող տնտեսութիւն ալ կ'ունենանք, գերարդիական զէնք ալ, հզօր բանակ ալ, ամէն ինչ ալ: Այս տարրական բանը ե՞րբ պիտի հասկնան թափառաշրջիկ գնչուներուն հաւասար դարձած հայերը...

Տաւուշի մարզի Գօշ գիւղի՝ Մելգոնեան եղբայրներու անունով կոչուած համայնքային կեդրոնին բացումը եթէ մէկ կողմէ պիտի սփռէ հայ գիրի, մշակոյթի եւ արուեստի լոյսը, անոր գոյառման փաստն իսկ շառաչուն ապտակ է ՀԲԸՄ.ը չարագործական կառոյցի վերածած ապիկար ղեկավարիկներուն, որոնք 2005-էն ի վեր խաւարի մէջ կը պահեն 80 տարի միայն լոյս սփռած «Լուսոյ տաճար»ը, փաստ մը, որ հաւասար է ազգային դաւաճանութեան:

There are no comments yet.